

Յատակագիծ Էջմիածնի. — Plan de la Cathédrale.

Ս. Հռիփսիմէ. — Eglise de S. Ripsimée (Etchm.).

թզաչափ մասն Նոյեան տապանին, ԱՀ սրբոյ Լուսաւորչին, ԱՀ սրբոյն Յակոբայ Մծբնեցւոյ, այլով մասամբ փայտի տապանին, Գագաթն սրբոյն Հռիփսիմեայ, և այլն։ Ի դասին են կրկին գահք կաթուղիկոսի, Ճարտար քանդակօք դրուագեալ. և այլ բազում քանդակք և պատկերք ի վերայ դրանց և կամարաց և ձեղուանն, յորոց շատք՝ ձեռագործք են Մկրտչի և Յովհաննու Նաղաշ կոչեցելոց և Սարգիսի Լեհացւոյ։ — Յարևմտից տաճարին կայ Կաթուղիկոսարանն, այսինքն բնակարան կաթուղիկոսին. և ի հիւսիսային և յարևելեան թեւս՝ միաբանից բնակարանք. իսկ ի հարաւակողմն որ Ղազարոպոպ կոչի՝ հիւրատունն մեծ՝ շինեալ ի Ղազարայ կաթուղիկոսէ, և նորոգեալ յաւելուածով յամին 1839. ուր հաստատեալ է ժողովարան Սինհոդոսին, զոր կարգեաց կայսրն Ռուսաց յամին 1837 ի վարչութիւն ուխտի եկեղեցւոյն Հայոց։ Ի նեղքոյ հիւրատանն են Սեղանատունք՝ ամարայինն մեծ և քարաշէն, ձմերայինն փոքր. Մոմպոռանն՝ ապիտակարանն մոմոյ. Խոհակերոց մեծ, Սառցատուն, և այլն։ Տպագրարան մերձ նոցին, կայր և Թղթարան յառաջագոյն. ի վերայ մեծի սեղանատանն կայ Մատենադարանն, յորում Ճոխ հաւաք հայ ձեռագրաց և այլոց ոչ սակաւ ապագիր մատենից։ Պարտէզք ընդարձակք են վանացն, այլ և բուրաստանք, ջրհորք և առուք ածեալք ի Քասաղայ, և Քանդան ջուր բղխեալ ի նեղքուստ եկեղեցւոյն. և Ծառատունկ նոր հանդերձ լճաւ յաւելեալ ի տէր Ներսիսէ այժմեան կաթուղիկոսէ։ Թիւ միաբանիցն առաւելու և նուազէ, որպէս այժմս, յորս են արքեպիսկոպոսք, և եպիսկոպոսունք, վարդապետք և աբեղայք. հաստատեալ կամ է անդ և մեծ վարժարան մանկտւոյ։ Հասք միաբանիցն հայթհայթին ի կալուածոց տաթռուոյն, յորս են ոչ սակաւ գեղք մերձակայք և այգիք և խանութք, և ի նուիրաց։ Յամէն 1441 յորում կրկին հաստատեցաւ տաթռս նախագահ հայրապետութեանն Հայոց Յէջմիածնին՝ մինչև ցայժմ նստան 44 կաթուղիկոսունք։

133. Քառորդաւ ժամաւ հեռի ի վանացն յարևելից հիւսիսոյ կայ երկրորդ եկեղեցին՝ Ս. Հռիփսիմէ ի տեղւոջ նահատակութեան հրաշագեղ կուսին և մօր հոգևորի Հայաստանեայց՝ 32 ընկերօքն ի Հռիմոս թագաւորին Հայոց, շինեալ նախ ի Լուսաւորչէն, ապա ի մեծէն Սահակայ, և յետոյ ի Կոմիտասայ կաթողիկոսէ յամին 618, որոյ և արձան յիշատակի անջինջ կայ անդ, ուր և գերեզմանն իսկ. Նորոգեալ յետ հազար ամաց ի Փիլիպպոսէ կաթուղիկոսէ, և սա անդ հանգչի. պարսպատատ է և եկեղեցիս այս։ Իսկ երրորդ եկեղեցին Ս. Գայիանէ մերձագոյն ի վանն՝ ի հարաւոյ կայ, ուր նահատակեցաւ մայրն Կուսանաց երկոքեանքն ընկերօքն. զեկեղեցին գրիգորաշէն ընդարձակեալ վայելուչ ևս շինեաց յամին 630 Եղբ կաթողիկոս, և ինքն անդէն հանգչի. և յետ հազար ամի Փիլիպպոս կաթողիկոս, յետ նորա Եղիազար շինեաց գաւիթ, և ինքն անդ հանգչի հանդերձ այլովք աշխարհանակցօք։ Են և առ սովաւ պարիսպք և բնակարանք։ Կայ և ջրրորդ եկեղեցի յարևմտից Հռիփսիմեայ ի տեղւոջ նահատակութեան միաւոր հիւանդ կուսին. Նորոգեալ ի Նահապետէ կաթողիկոսէ յամին 1690, ուր և ինքն հանգչի։ Կիսաժամաւ հեռի կայ հանգուցեալ անուանի եկեղեցին Ս. Գրիգորի Աստապատ կոչեցեալ, յաւազախիր առասպարտեղւոջն՝ ուր Տրդատ այլակերպեալն ընդառաջ եղև Գրիգորի. Ներսէս Գ կաթուղիկոս ի կէս Է դա-